

ՀՏԴ 745/749(479.25)

**Ա.Գ. ՍՈԼՈՄՈՆՅԱՆ, Լ.Վ. ԹՈՔՄԱԶՅԱՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՉԱՅՆՈՒՄ**

Ուսումնասիրվում է հայկական ազգային առանձնահատկությունների հիմնահարցը հասարակական և հատկապես բնակելի տարածքների ներքին միջավայրի՝ ինտերիերի կազմակերպման և ձևավորման տեսանկյունից: Հիմնավորվում է բարձրացվող հիմնախնդրի արդիականությունը և կարևորությունը: Նախանշվում են հետագա հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն ու խնդիրները:

**Առանցքային բառեր.** ազգային, միջավայրի դիզայն, ինտերիեր, արժեհամակարգ, ավանդույթ, ոճի պահպանում:

**Ներածություն:** Արդի պայմաններում ազգային կերպարվեստի ավանդույթների ներուժը դիտարկվում է որպես դիզայնի հիմնական ստեղծագործության խթանիչ հանգամանք, քանի որ ժամանակակից դիզայնում ազգային մշակութային մոդելների ձևավորման խնդիրն արդիական է [1]:

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր մշակույթում, որպես կանոն, գերակշռում են տվյալ մշակույթին բնորոշ արժեքները, ապա դիզայնի ավանդույթների ձևավորման համար առաջնահերթ է նախատիպային իմացությունը, որը հիմնվում է սեփական մշակութային պատմության ընկալման, դրա խորքային գիտակցման, ապագային ուղղված գործունեության, նախանշման վրա [2]: Ավելի պարզ ձևակերպմամբ՝ ցանկացած իր կամ կառույց արտահայտում է մի որոշ ժամանակաշրջանի գեղարվեստական և ֆունկցիոնալ ըմբռնումները, որոնք էլ իրենց հերթին դառնում են հիմք՝ այդ նյութական արժեքները ստեղծող հանրույթի աշխարհայացքի, բնավորության, գեղարվեստական ստեղծագործության և գեղագիտական ընկալումների ձևավորման համար: Ազգային մշակույթի հիման վրա դիզայնի գործընթացը կազմակերպելու համար խորքային և հիմնարար գիտելիքներ են անհրաժեշտ:

Մեր օրերում, տնտեսության զարգացման օրինաչափություններից կամ առանձնահատկություններից ելնելով, դիզայն նախագծման, ձևավորման հիմնական ուղղություններից են դարձել տուրիզմի և ժամանցի ոլորտները, որոնց խթանմանն ուղղված դիզայն գործունեությունը, մասնավորապես, ազգային կուլտուրի կամ ինքնատիպությունն արտահայտող տարբեր նշանակությամբ միջավայրերի ստեղծումը կամ ձևավորումը կարող է հետաքրքրել ինչպես հայ, այնպես էլ ոչ

հայազգի այցելուներին, այնպիսի միջավայր, որտեղ այցելուն իրեն կարող է զգալ այդ աշխարհագրական շրջանին համահունչ պատմական միջավայրում:

Ինչպես ցույց է տալիս փորձը, լավագույն ուղին ազգայինի համադրումն է նոր տեխնոլոգիաների հետ: Հայաստանի տնտեսության զարգացմանը զուգահեռ՝ տնտեսավարողների պահանջները նաև փոխվելու են ինչպես արդյունաբերական, այնպես էլ քաղաքաշինական, սպասարկման, անգամ լանդշաֆտային դիզայնի ոլորտներում: Ուստի հայ դիզայներների հիմնական խնդիրներից պետք է լինի, ազգայինը պահպանելով, կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներն ու միտումները՝ մրցակցելով միջազգային ընկերությունների հետ, ստեղծել ժամանակակից կենսագործունեության արդյունավետ և գրավիչ միջավայր, որտեղ այցելուն իրեն առավելագույնս հարմարավետ կզգա: Այդ ճանապարհին նորարակական մտքի և ազգային գեղագիտական ընկալումների համադրումը կարող է լինել լավագույն լուծումը: Պետք է ձգտել յուրաքանչյուր միջավայր վերածել ազգային ինքնատիպության գործոնի, որտեղ միմյանց հետ համադրված պետք է աշխատեն գրաֆիկական դիզայնի տարրերը, դիզայներական, ճարտարապետական լուծումները և դեկորատիվ տարրերը (կուժ, կարասի, երկանքի քարեր, կահույք, գորգեր, կարպետներ, և այլն) և ժամանակակից սարքավորումներն ու տեխնոլոգիաները:

Չհաջողված լուծումներից խուսափելու համար առաջնահերթ է հիմնական գաղափարին հավատարմությունը, երբ միջավայրի նախագծումը պետք է իրականացնել ժառանգորդության ճշգրիտ արտահայտմամբ: Անճշտություններից, իսկ երբեմն անճաշակությունից խուսափելու համար ահրաժեշտ է ձևավորել տարբեր պատմական ժամանակաշրջանները բնորոշող պատմաճարտարապետական, դեկորատիվ ձևավորման տարրերի, կենցաղային իրերի և կահավորման ամբողջական տեղեկատվական բազա՝ հենված գիտական ստույգ աղբյուրների վրա:

Այդ հարցում լուրջ բացեր կան, ինչպես և կատարվելիք մեծ աշխատանք: Այս առումով առայժմ հիմնական ուղեցույցի դեր են կատարում մի քանի նվիրյալների, ինչպիսիք են՝ Լուսիկ Ազուլեցին\* [3], Լևոն Աբրահամյանը, Էմմա Պետրոսյանը, Ժենյա Խաչատրյանը և այլք, ուսումնասիրությունները:

Երևանի Մուրացան փողոցի 79 տունը, որտեղ շուրջ 45 տարի ապրել և ստեղծագործել է Լուսիկ Ազուլեցին, վերածվել է թանգարանի, որին կից գործում է «Ազուլեցի արտ-սրճարան»-ը, որտեղ ներկայացված է հայկական ավանդական խոհանոցը՝ ազուլիսյան ուտեստներով:

Մեզ հետաքրքրող ուսումնասիրության համար հետաքրքրություն է ներկայացնում հայկական կերպարվեստի ներկայացուցիչների Վաղարշակ Էլիբեկյանի,

Հակոբ Անանիկյանի և այլոց ստեղծագործությունները, որոնցում պատկերված է տվյալ ժամանակաշրջանին բնորոշ միջավայրը:

Մեծածավալ տեղեկություններ կարելի է ստանալ թանգարաններից, մասնավորապես՝ Սարգսրապատի, Երևանի պատմության, Ձիթողցոնց տուն-թանգարանի, բազմաթիվ մշակույթի, գիտության, քաղաքական անվանի գործիչների տուն-թանգարաններից, առկա ազգագրական ուսումնասիրություններից: Առավել հավաստի և լիարժեք նյութ կարելի է ստանալ՝ ուսումնասիրելով հին լուսանկարները:

Ուսումնասիրելով վերոնշյալ նյութերը՝ կարելի է ստեղծել համակարգված բազա: Նման բազայի ստեղծումը ոչ միայն կարող է դյուրացնել դիզայներների աշխատանքը, այլև հնարավորություն կտա ցանկացած միջավայր ձևավորելիս առաջնորդվել ազգային առանձնահատկությունների ճշգրիտ մատուցմամբ՝ սկսած գրաֆիկական լուծումներից, ազգային տարրերով դեկորատիվ լուծումներից, վերջացրած անգամ ճաշացանկի ձևավորումից, երաժշտությամբ:

Պետք է արձանագրենք, որ շատ վաղ անցյալից մինչ 20-րդ դարը գրեթե չեն ուսումնասիրվել հայկական ազգային առանձնահատկությունները հասարակական և հատկապես բնակելի տարածքների ներքին միջավայրի՝ ինտերիերի կազմակերպման և ձևավորման տեսանկյունից: Հիմնական ուսումնասիրություններն իրականացվել են ազգային տարազների, ծիսակատարությունների և ավանդույթների ուղղությամբ:

Հենվելով կատարված հիմնավորումների վրա՝ ձևակերպենք հետագա հետազոտական աշխատանքի հիմնական նպատակը:

#### **Աշխատանքի հիմնական նպատակն է.**

Հենվելով գիտականորեն հիմնավորված պատմամշակութային ժառանգության փաստերի վրա՝ մշակել համակարգված տեղեկատվական բազա, որը հնարավորություն կտա միջավայրի դիզայնի գործընթացը կազմակերպել ազգային մշակութային չափավորված արժեքներին համահունչ:

#### **Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.**

Իրականացնել միջավայրի (ինտերիեր, էքստերիեր) տարբեր ժամանակային և տարածքային խորքային ուսումնասիրություն և խմբավորել ըստ ֆուկցիոնալ նշանակության, օգտվելով.

1. հետևյալ աղբյուրների նյութերից և նմուշներից՝
  - 1.1. ազգագրական կենտրոնների,
  - 1.2. թանգարանների,
  - 1.3. գեղանկարչական աղբյուրների,
  - 1.4. լուսանկարների,

1.5. գրական ստեղծագործությունների:

2. Իրականացնել համակարգված վերլուծություն՝ ըստ տարածաշրջանների տարբեր ժամանակաշրջանի համար: Տարածաշրջանների ուսումնասիրությունները նպատակահարմար է սկսել առավել նշանակալի վայրերից, այսպես.

2.1. Շիրակի մարզ՝ մասնավորապես Գյումրի,

2.2. Տավուշի մարզ՝ մասնավորապես Իջևան կամ Ենոքավան, կամ Դիլիջան,

2.3. Գեղարքունիքի մարզ՝ մասնավորապես Սևան կամ Գավառ,

2.4. Սյունիքի մարզ՝ մասնավորապես Գորիս կամ Տաթև, կամ Մեղրի,

2.5. Կոտայքի մարզ՝ մասնավորապես Ծաղկաձոր,

2.6. Արարատի մարզ՝ Խոր Վիրապ,

2.7. Երևան և այլն:

Աշխատանքի վերջնական արդյունքը պետք է լինի.

Կատարված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կազմել ուղեցույց, կատալոգ՝ ֆունկցիոնալ նշանակությամբ օբյեկտների միջավայրային դիզայնի տարրերի նկարագրական տեղեկատվական բազա՝ կոնկրետ ժամանակաշրջանի համար:

Սա բավական ծավալուն աշխատանք է, և այդ պատճառով ուսումնասիրությունները պետք է իրականացվեն մաս-մաս, փուլերով ինչպես ժամանակային, այնպես էլ տարածաշրջանային, հնարավոր է՝ նաև ֆունկցիոնալ առումով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Абаимова Е.Л.** Дизайн как общекультурный и национальный феномен: Диссертация кандидата философских наук.- Ростов-на-Дону, 2009.- 147 с.
2. **Сидоренко В.** Эстетика проектного творчества.- М.: ВНИИТЭ, 2007.- 135с.
3. <https://www.facebook.com/LusikAguletsi/>

#### Ա.Գ. СОЛОМОНЯН, Լ.Վ. ТОКМАДЖЯՆ

#### АРМЯНСКИЕ НАЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ В ДИЗАЙНЕ

Рассматривается вопрос армянских национальных особенностей с точки зрения дизайна интерьера общественных и особенно жилых помещений. Обоснована актуальность и важность поднятой проблемы. Обозначены основная цель и задачи дальнейшей научно-исследовательской работы.

**Ключевые слова:** национальный, средовой дизайн, интерьер, система ценностей, традиция, сохранение стиля.

A.G. SOLOMONYAN, LV. TOKMAJYAN

## ARMENIAN NATIONAL CHARACTERISTICS IN DESIGN

The issue of Armenian national characteristics from the standpoint of interior design of public, particularly the residential areas. The relevance and importance of the issue raised is substantiated. The main goal and problems of further research work are outlined.

**Keywords:** national, environmental design, interior, value system, tradition, preservation of style.

ՀՏԴ 622.343 : 669.35-054.75(479.25)

### Հ.Հ. ԹՈՔՄԱՋՅԱՆ

#### ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՎԱԾ ՊՂՆՁԱԳՈՐԾՆԵՐԸ ԵՎ ՊՂՆՁԵ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ներկայացվում են տվյալներ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Խորհրդային Հայաստան տեղափոխված արհեստավորների, նոր պայմաններում նրանց գործունեության որոշ առանձնահատկությունների մասին: Ուսումնասիրվում են նույն ժամանակաշրջանում Հայաստան տեղափոխված և կենցաղում օգտագործվող պղնձյա իրերի առանձնահատկությունները, Հայրենադարձների հետ Հայաստան տեղափոխված թանգարաններում և մասնավոր հավաքածուներում պահվող պղնձե առարկաների նմուշները:

**Առանցքային բառեր.** պղնձագործ, հայրենադարձ, արհեստ, ինքնություն, արտիֆակտ:

Վերջին տարիներին հայկական պղնձագործության վերաբերյալ նյութեր հավաքելիս առնչվեցինք մի շարք հետաքրքրական երևույթների: Մեր ուսումնասիրությունները վերաբերել են, մասնավորաբար, Սիրիային և հարակից շրջաններին: Տարածաշրջանում հարյուրավոր հայ վարպետներ են աշխատել, որոնք թողել են հարուստ նյութական ժառանգություն: Առաջին աշխարհամարտից հետո ցեղասպանությունից փրկված հայերի մի զգալի մասը հանգրվանեց Սիրիայում [1]: Նրանց մի մասը հետագայում հեռացավ երկրից տարբեր ուղղություններով: Հայ գաղթականների այն հատվածը, որը մնաց և հաստատվեց Սիրիայում, ինտեգրվեց տեղական կյանքին և մասնակցեց երկրի տնտեսական զարգացմանը: Պղնձագործները ևս իրենց կարևոր ներդրումն ունեցան տեղական արհեստագործության զարգացման մեջ: Մինչև 20-րդ դարի կեսերը Սիրիայի տարբեր քաղաքներում, շուկաներում աշխատող հայ վարպետներն իրենց հեղինակությամբ անմրցելի էին: Տեղի բնակչության համար «հայի գործը» որակի նշան էր: Այս